ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018 ԹՎԱԿԱՆ

1. ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

❍ Առևտրի իրականացման վայրի վաճառատեղի տրամադրման գործընթացի կանոնակարգում

ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնցով նախատեսվում է կանոնակարգել առևտրի իրականացման վայրի վաճառատեղի տրամադրման գործընթացը: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ Ֆինանսների նախարարության և Պետական եկամուտների կոմիտեի հետ փոխհամաձայնեցված տարբերակը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախագծերը ներկայացվելու են նոր Կառավարության քննարկմանը:

❍ Շրջիկ առևտրի իրականացման գործընթացի կանոնակարգում

ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացված ««Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մյուս փաթեթով նախատեսվում է կանոնակարգել շրջիկ առևտրի իրականացման գործընթացը: Նախագծերը լրացուցիչ քննարկվել են ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Մարդու իրավունքների պաշտպանի հետ և լրամշակվել: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ չհամաձայնեցված կետերի մասով քննարկումները շարունակվել են: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախագծերը ներկայացվելու են նոր Կառավարության քննարկմանը:

❍ Մանրածախ շուկայում մեծածախ վաճառողների գործունեության սահմանափակում

Շրջանառության մեջ դրված «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հաջորդ փաթեթը քննարկվել է շահագրգիռ մարմինների, մասնավոր հատվածի, ինչպես նաև Համաշխարհային բանկի համապատասխան փորձագետների հետ, որոնք բացասական դիրքորոշում են ներկայացրել վերջինիս վերաբերյալ՝ պետության կողմից նմանատիպ միջամտությունը համարելով ոչ նպատակահարմար: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախարարությունը դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ ՀՀ վարչապետի համաձայնության առկայության պարագայում Նախագիծը շրջանառությունից հանելու առաջարկով:

2. ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

❍ ՓՄՁ սուբյեկտների, ներդրողների խախտված կամ վիճարկվող իրավունքների վերա-կանգնման արտադատարանական անկախ ինստիտուտի ներդնում

«Ձեռնարկատիրական հաշտարարի մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ կառավարության նիստում քննարկման է դրվելու նոր Կառավարության ձևավորումից հետո:

❍ «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2019 թվականի ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախարարության կողմից ՀԲ «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի բարեփոխումների թիմի փորձագետների կողմից կազմված հուշագրի «Շինարարական թույլտվություններ» ցուցիչի մասով կազմակերպվել են քննարկումներ ՀԲ փորձագետների և ոլորտի շահառուների հետ:

Նախարարությունը դիմել է ՀՀ վարչապետին՝ ծրագրի նախագիծը նոր Կառավարության կազմավորումից հետո քննարկելու համար:

- **«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթին հավանություն տալու մասին»** ՀՀ կառավարության որոշման նախագծերի փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

- **«ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և մի շարք հարակից օրենքների նախագծերի փաթեթը** ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախագիծը կրկին անգամ կներկայացվի ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցնելուց հետո:

- **«Հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռքբերման և իրացման գործընթացը կազմակերպելու, ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացում կատարելու և գնման ընթացակարգ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի N861-Ն որոշման մեջ մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը** ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի հանձնարարությամբ նախագիծը կրկին անգամ կներկայացվի ՀՀ ֆինանսների նախարարության հետ համաձայնեցնելուց հետո:

- **«Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացման ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ) և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) աջակցությամբ ՓՄՁ զարգացման նոր ռազմավարությունը մշակելու նպատակով ներգրավվել է համապատասխան փորձագիտական խումբ, որի հետ համատեղ իրականացվում են նախագծի ձևավորման աշխատանքները:

- **ՓՄՁ ոլորտի վիճակագրության և տեղեկատվության հավաքագրման կատարելագործում և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) հետ համատեղ կազմակերպվել է աշխատաժողով՝ «ՓՄՁ վիճակագրության բարելավումը Հայաստանում» թեմայով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մասնագետներին ՓՄՁ ոլորտի վիճակագրական տվյալների հավաքագրման և մշակման ոլորտում Դանիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունների փորձագետների օժանդակությամբ հունիսին հրապարակվել է «Ավելացված արժեքն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների չափերի» հրապարակումը 2016 թվականի համար, իսկ նոյեմբերին՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում» վիճակագրական տեղեկագիրը:

- **Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում առկա՝ փոքր և միջին ձեռնարկատերերի համար խնդրահարույց դրույթների վեր հանում և համապատասխան առաջարկների ներկայացում**

ՀՀ հարկային օրենսգրքում առկա ՓՄՁ-ներին վերաբերող խնդրահարույց դրույթների վերհանման նպատակով 2018թ. օգոստոսին ՀՀ մարզերում և մայրաքաղաքում կազմակերպվել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ, որոնց արդյունքում առանձնացվել են ՓՄՁ-ների բնականոն գործունեությանն առավել խոչընդոտող և հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Նշված խնդիրների լուծման առաջարկները ներկայացվել են ՀՀ փոխվարչապետի գլխավորությամբ գործող՝ Հարկային օրենսգրքի փոփոխությունների մշակման աշխատանքներն իրականացնող աշխատանքային խմբին՝ ՀՀ հարկային օրենսգրքի նախագծում ընդգրկելու նպատակով:

- **«Պետական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը» 2018 թվականի ծրագրի իրագործում, այդ թվում՝**

ՓՄՁ-ի ոլորտում աջակցության ծրագրեր իրականացնող միջազգային կառույցների հետ համագործակցության խորացում

2018թ. ընթացում ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 8979 աջակցություն հետևյալ ուղղություններով.

- սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն՝ 313,
- ուսուցողական աջակցություն, այդ թվում՝ ոլորտային տեխնոլոգիական դասընթացներ՝ 314,
- տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն՝ 8010,
- սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում՝ 64,
- ոլորտային աջակցության շրջանակներում դրամաշնորհների տրամադրում՝ 49,
- ՓՄՁ միջազգայնացում, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում՝ 229:

❍ **Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնակարգի վերանայում**

«Փրայսուոթերսհաուս Կուպերս Հայաստան» (PwCArmenia) ընկերության հետ համատեղ մեկնարկել են կորպորատիվ կառավարման օրենսդրական բարելավման ուղղությամբ աշխատանքները, մասնավորապես՝ միջազգային մրցույթի արդյունքում արդեն իսկ ընտրվել է համապատասխան փորձագետ, որը տրամադրելու է համապատասխան խորհրդատվություն:

3. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԵՎ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

❍ **Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն ծրագրի մշակում և իրականացում**

Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2018 թվականի ծրագրի շրջանակներում իրականացվել են.

Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և կազմակերպում.

- «Confindustria Emilia» արդյունաբերական ասոցիացիայի կողմից լիազորված «SAHAKA Marketing and Communication Consultancy» ընկերության ներկայացուցչի հետ համատեղ հայկական 5 ընկերություն մասնակցել է Իտալիայի Բոլոնիա քաղաքում սեպտեմբերի 5-ից 6-ը կայացած «Farete» միջազգային գործարար համաժողովին:
- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ, Նախարարության և Բիզնես Արմենիայի աջակցությամբ, հոկտեմբերի 22-24-ը Հայաստանում կազմակերպվել է «Եվրասիական շաբաթ» միջազգային ցուցահանդեսային համաժողովը, որին մասնակցել է 101 ընկերություն ԵԱՏՄ երկրներից, հայկական կողմից՝ 85 ընկերություններ՝ ներկայացնելով իրենց արտադրանքը: Միաժամանակ, համաժողովի ընթացքում իրականացվել են շուրջ 100 B2B հանդիպումներ:

Օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում.

- Նկարահանվել և հրապարակվել են ավելի քան 20 տեսանյութեր, մասնավորապես, դեղագործության, ոսկեգործության, գյուղմթերքի վերամշակման, տեղեկատվական տեխնոլոգիաների, թեթև արդյունաբերության և այլընտրանքային էներգետիկայի ոլորտների վերաբերյալ: Բացի այդ նույն ոլորտների վերաբերյալ տարբեր լեզուներով պատրաստվել և տպագրվել են բրոշյուրներ, որոնք վերոգրյալ միջոցառումների ընթացքում տրամադրվել են մասնակիցներին:

- «Global FDI reports» գործակալության հետ համագործակցության արդյունքում Արաբական Միացյալ Էմիրություններում հրատարակվող, Միջին Արևելքի և Ծոցի երկրներում տարածվող անգլալեզու Gulf News օրաթերթը հատուկ թողարկում է նվիրել Հայաստանին՝ ներկայացնելով մեր երկրի ներդրումային առավելությունները, երկրի իմիջն ու գործարար միջավայրը:
- Ստոկհոլմում հոկտեմբերի 23-24 «The Emerging Europe Alliance for Business Services, Innovation and Technology» և «Nordic IT Association» կազմակերպությունների կողմից նախաձեռնած նորարարական տեխնոլոգիաների համաժողովին ներկայացվել են Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներուժը և ներդրումային առավելությունները:

Ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում.

- փետրվարի 5-9 Մոսկվայում կայացած սննդի, խմիչքի և դրանց արտադրության հումքի «PRODEXPO 2018» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին կազմակերպվել է հայկական 21 ընկերությունների մասնակցությունը:
- մարտի 13-16-ը Մոսկվայում կայացած կաշվե իրերի, կոշիկի և դրանց արտադրության համար հումքի միջազգային «Mocшуз» ցուցահանդեսին կազմակերպվել է կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող 8 հայկական ընկերությունների և ԱՁ-երի մասնակցությունը:
- մարտի 20-23 Մոսկվայում կայացած «Текстильлегпром 2018» 50-րդ ցուցահանդեսին կազմակերպվել է 5 հայկական ընկերությունների մասնակցությունը:
- սեպտեմբերի 4-ից 7-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած «CPM- Collection Premiere Moscow» ցուցահանդեսին կազմակերպվել է թեթև արդյունաբերության և նոևաձևության ոլորտի հայկական 14 ընկերության մասնակցությունը:
- սեպտեմբերի 10-ից 13-ը Մոսկվայում կայացած կաշվե իրերի, կոշիկի և դրանց արտադրության համար հումքի միջազգային «Mocшуз» ցուցահանդեսին կազմակերպվել է կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող 6 հայկական տնտեսվարողների մասնակցությունը:
- սեպտեմբերի 26-ից 30-ը 8 հայկական տնտեսվարողների մասնակցել են «Junwex Moscow» միջազգային ոսկերչական ցուցահանդեսին:
- հոկտեմբերի 21-25-ը 11 հայկական ընկերություններ մասնակցել են «SIAL Paris 2018» միջազգային սննդի ցուցահանդեսին:

Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում.

2018թ-ի ընթացքում տրամադրվել է 26 վարկերի սուբսիդավորվում՝ 131.4 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

- **Եվրոպական միության հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից բխող առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված քայլերի իրականացում**

2018թ. սեպտեմբերի 25-ին Երևանում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետություն -Եվրոպական Միություն Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի առաջին նիստը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ-ԵՄ առևտրատնտեսական համագործակցության ամրապնդմանը և ընդլայմանը առնչվող, ինչպես նաև «GSP+» արտոնյալ առևտրայի ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող դիտանցմանը, ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման նոր հնարավորություններին, երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

- **Եվրոպական միության հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզի՝ առևտրի և առևտրին առնչվող մասով մշակման աշխատանքներին մասնակցություն**

Մշակվել և ՀՀ շահագրգիռ նախարարությունների և մարմինների հետ քննարկվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի առևտրի և առևտրին առնչվող հարցերի մասի՝ 12 ուղղությունների կիրարկման ճանապարհային քարտեզը: Համաձայնագրի Առևտուր և առևտրին առնչվող հարցերի մասի ներքո համագործակցության շրջանակներում իրականացվելիք միջոցառումների ճանապարհային քարտեզի նախագիծը հետևյալ ոլորտներում՝ ապրանքների առևտուր, մաքսային ոլորտ, առևտրի տեխնիկական խոչընդոտներ, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ, ծառայությունների առևտուր, հիմնադրում և էլեկտրոնային առևտուր, ընթացիկ վճարումներ և կապիտալի տեղաշարժ, մտավոր սեփականություն, պետական գնումներ, առևտուր և կայուն զարգացում, մրցակցություն, պետական ձեռնարկություններ, թափանցիկություն, հանգամանորեն քննարկվել է եվրոպական կողմի հետ՝ ս.թ. սեպտեմբերի 25-ին Երևանում տեղի ունեցած ՀՀ-ԵՄ Առևտրի հարցերով գործընկերության կոմիտեի առաջին նիստի ընթացքում:

- **Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում մի շարք երրորդ երկրների հետ ազատ առևտրի համաձայնագրերի կնքման ուղղությամբ աշխատանքներ**

ԵԱՏՄ – Հնդկաստան

Հնդկական կողմի խնդրանքով բանակցային փուլի անցկացումը հետաձգվել է մինչև 2019 թվականի հունվար-փետրվար ամիսները: Համաձայնագրի նախնական տեքստը 2018թ. հոկտեմբեր ամսվա դրությամբ համաձայնեցվել է ԵԱՏՄ անդամ պետությունների միջև և ուղարկվել հնդկական կողմին:

ԵԱՏՄ – Իսրայել

2018 թվականի ապրիլի 23-ից 24-ը Մոսկվայում, իսկ՝ հոկտեմբերի 8-11-ը Իսրայելի Հանրապետությունում տեղի են ունեցել Համաձայնագրի կնքման բանակցությունների 2-րդ և 3-րդ փուլերը: ԵԱՏՄ շրջանակում նախնական համաձայնեցվել են արտահանման հետաքրքրություն ներկայացնող ապրանքային ցանկերը, սակագնային պարտավորությունները և դրանցից հանումները՝ իսրայելական կողմի հետ պարտավորությունների փոխանակում իրականացնելու նպատակով: Հերթական բանակցային փուլը նախատեսվում է անցկացնել 2019 թվականի փետրվար-մարտ ամիսներին:

ԵԱՏՄ – Սինգապուր

2018թ. հունիսի 4-ից 8-ը Ղազախստանի Հանրապետությունում տեղի է ունեցել Համաձայնագրի բանակցությունների 4-րդ փուլը: Սեպտեմբերի 2-7-ը Սինգապուրում անցկացվեց Համաձայնագրի շուրջ բանակցային 5-րդ փուլը: Դեկտեմբերի 3-6-ը ք. Մոսկվայում տեղի է ունեցել բանակցությունների հերթական 6-րդ փուլը: Համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցվել է ԵԱՏՄ փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ նշված Համաձայնագրի շուրջ կայանալիք հերթական 7-րդ փուլը կանցկացվի 2019 թվականի փետրվար ամսին:

ԵԱՏՄ-Եգիպտոս

Եգիպտական կողմի նախապատրաստած ազատ առևտրի մասին համաձայնագրի նախագիծը ներկայացվել է ԵՏՀ և ուղարկվել է ԵԱՏՄ անդամ պետություններ՝ նախագծի վերաբերյալ դիրքորորշում ներկայացնելու նպատակով: Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացվել է ՀՀ-ի համար Եգիպտոս արտահանման հետաքրքրություն ներկայացնող նախնական ապրանքային ցանկերը Համաձայնագրի մեջ ներառելու նպատակով: Բանակցությունների առաջին փուլը տեղի է ունեցել 2019 թվականի հունվարի 15-17-ը ք. Կահիրեում:

ԵԱՏՄ- Սերբիա

2018 թվականի հոկտեմբերի 2-ից 3-ը ԵԱՏՄ և Սերբիայի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին համաձայնագրի շուրջ կայացած բանակցային 2-րդ փուլից հետո սերբական կողմը ակնկալում է լրացուցիչ սակագնային արտոնությունների ստացում պանրի որոշակի տեսակների,

ալկոհոլային խմիչքների և ծխախոտի մասով: 2019 թվականի հունվարի 10-ից 11-ը Սերբիայում տեղի է ունեցել Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների 3-րդ փուլը:

- **ԵԱՏՄ-ի շրջանակներում բանակցային գործընթացներին (ԵԱՏՄ-Իրան և ԵԱՏՄ-Չինաստան մասով) մասնակցություն՝ ըստ նախորդ փուլերի արդյունքների**

2018 թվականի մայիսի 17-ին Աստանայում ստորագրվել են.

- «Եվրասիական տնտեսական միության ու դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության միջև՝ մյուս կողմից, ազատ առևտրի գոտու ձևավորմանն ուղղված» Ժամանակավոր Համաձայնագիրը: Ներկայումս իրականացվում է համաձայնագրի վավերացման գործընթացը:
- «ԵԱՏՄ անդամ պետությունների և ՉԺՀ-ի միջև առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագիրը: Ներկայումս իրականացվում է համաձայնագրի վավերացման գործընթացը:

- **Ոսկերչական իրերի՝ ԵԱՏՄ-ի երկրներում հարգադրոշմման փոխճանաչելիության ապահովում**

Ոսկերչական իրերի՝ ԵԱՏՄ երկրներում հարգադրոշմման փոխճանաչելիության ապահովման դրույթները նախատեսվում են կարգավորել «ԵԱՏՄ մաքսային տարածքում թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի հետ կապված գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի համապատասխան հոդվածներով:

Համաձայնագրի նախագծի մշակման աշխատանքներն ավարտվել են: ԵՏՀ 2018թ. հոկտեմբերի 2-ի հանձնարարականով Համաձայնագրի նախագիծն ուղարկվել է անդամ-պետություններին՝ ներպետական համաձայնեցումներ իրականացնելու նպատակով: Նախատեսվում է, որ Համաձայնագիրը կսկսի գործել 2019թ. չորրորդ եռամսյակից:

- **Գործող արտոնությունների համակարգերի կիրառման շարունակականության ապահովում (GSP, GSP+ և այլ)**

«GSP+» առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող 2018թ. մոնիտորինգի փուլի շրջանակներում պատրաստվել, ամփոփվել և եվրոպական կողմին է տրամադրվել ՀՀ զեկույցը՝ 27 միջազգային կոնվենցիաների արդյունավետ իրականացումը գնահատելու նպատակով:

«GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի ներքո «Գրանցված արտահանողների համակարգը» (REX) ներդրվել է 2018թ. հունվարից: Արտադրողները և արտահանողները տեղական ծագման ապրանքները ԵՄ շուկա արտահանելու նպատակով կարող են գրանցվել REX էլեկտրոնային համակարգում, որը հնարավորություն է տալիս «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ արտահանումներն իրականացնել առանց ծագման երկրի Ա ձևի հավաստագրի՝ յուրաքանչյուր արտահանման դեպքում ներկայացնելով միայն ծագման հավաստման հայտարարություն: «Գրանցված արտահանողների համակարգը» (REX) նպաստում է ԵՄ արտահանման գործընթացի դյուրացմանը և հնարավորություն է տալիս արտահանողին կրճատելու ծախսերը և խնայելու ժամանակը: Մինչ այսօր կատարվել է 35 հայկական կազմակերպությունների խորհրդատվության տրամադրում և գրանցում «REX» համակարգում:

- **Առևտրային ներկայացուցիչների ինստիտուտի կատարելագործում և ընդլայնում**

Շրջանառության մեջ է դրվել «Վրաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչ նշանակելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը:

Առևտրական ներկայացուցիչների ինստիտուտի կատարելագործման և ընդլայնման՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և թիրախային այլ երկրներում նոր ներկայացուցիչների նշանակման հետ կապված քննարկումներ են ընթանում ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ:

- **Հայաստանի համար թիրախային շուկաներում գործող ներմուծման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվական ամբողջական հասանելիության ապահովում**

Նախարարության պաշտոնական կայք-էջում տեղադրված են 7 թիրախային շուկաների (Արաբական Միացյալ Էմիրություններ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Իրանի Իսլամական Հանրապետություն, Քաթար, Լիբանան և Վրաստան) մասով ներմուծման ընթացակարգերի ամփոփ տեղեկագրերը: Ներկայումս իրականացվում են ևս 3 շուկաների մասով վերջնական շտկումներ, որոնք ևս կտեղադրվեն կայք-էջում:

- **Հայկական արտահանող արտադրողների և նրանց արտադրանքի վերաբերյալ տվյալների էլեկտրոնային հարթակի ներդրում**

Աշխատանքներ են իրականացվել հայկական արտահանող արտադրողների և իրենց կողմից արտադրված ապրանքատեսակների վերաբերյալ շտեմարանի մշակման ուղղությամբ: Յուրաքանչյուր արտադրողի մասով ներկայացվել է հետևյալ տեղեկատվությունը՝ գործունեության ոլորտը, կազմակերպաիրավական տեսակը, կոնտակտային տվյալները, արտադրվող արտադրանքի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը, տվյալ արտադրանքի արտահանման ներուժային շուկաները: Շտեմարանը տեղադրված է Նախարարության պաշտոնական կայք-էջում:

- **Արտահանման ապահովագրության ծավալի աճի ապահովում**

2018 թվականի ընթացքում «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ գործունեության արդյունքում 31 տնտեսվարող սուբյեկտների հետ կնքել է 592 ապահովագրական վկայագրիր, որոնց.

- ընդամենը ապահովագրական գումարը կազմել է 7,851.16 մլն ՀՀ դրամ, աճը նախորդ տարվա նկատմամբ՝ 173.2%,
- հավաքագրված ապահովագրավճարը կազմել են 75.5 մլն ՀՀ դրամ, աճը նախորդ տարվա նկատմամբ՝ 195.0%:

- **Որակավորման ստուգման ծրագրեր իրականացնող և միջլաբորատոր փորձարկումներ կազմակերպող միջազգային պրովայդեր կազմակերպության ներկայացուցչության ստեղծման իրավական հիմքերի ձևավորում**

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Օգոստոսի 22-ին ՀՀ վարչապետի հանձնարարականով օրենքի նախագիծը ներկայացվել է լրացուցիչ քննարկման: Համաձայն ՀՀ վարչապետի հանձնարարության՝ Օրենքի նախագիծը կներկայացվի նոր Կառավարության քննարկմանը:

4. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄ

- **Թվով 2 թիրախային ոլորտներում օտարերկրյա ներդրումների ներգրավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում**

Նախարարությունը Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում թիրախավորել է ՀՀ տնտեսության երկու արտադրության ոլորտներ՝ պանրի արտադրությունը և ջերմոցային գյուղատնտեսությունը:

- **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում Հայաստանի ներառման ապահովում**

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում Հայաստանի ներառ-

ման ապահովման նպատակով Նախարարության կողմից 22 ոլորտներ ներառող լրացված հարցաշարերը ամփոփվել, թարգմանվել և տրամադրվել է ՏՀՀԿ փորձագետներին համապատասխան վերլուծություններ իրականացնելու և ՕՈՒՆ կարգավորումների սահմանափակման ինդեքսի վարկանիշում Հայաստանի ներառման գործընթացը վերջնականացնելու նպատակով:

- **Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության համաձայնագրերի մոնի-թորինգ և արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ ներառյալ համաձայնագրի ներկա օրինակելի մոդելի վերանայում**

Մշակել է նոր նախագիծ՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան: Օրինակելի ձևը (հայերեն և անգլերեն) տրամադրվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ ռուսերեն լեզվով թարգմանությունն ապահովելու նպատակով: Որոշակի ճշգրտումներ իրականացնելուց հետո վերոնշյալ նախագիծը կդրվի շրջանառության մեջ՝ շահագրգիռ գերատեսչություններից կարծիքներ ստանալու նպատակով:

- **«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ**

ՀՀ կառավարության 2018թ. սեպտեմբերի 6-ի N1012-Ա որոշմամբ հավանություն է տրվել «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագծին:

5. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- **Հայաստանի Հանրապետության ինովացիոն էկոհամակարգի քարտեզագրմանն ու ոլորտի կարողությունների գույքագրմանն ուղղված աշխատանքների ապահովում**

Գերմանական միջազգային համագործակցության ընկերակցության աջակցությամբ ներգրավված տեղական և միջազգային փորձագետների հետ համատեղ իրականացվել են Հայաստանի Հանրապետության ինովացիոն էկոհամակարգի քարտեզագրման ու ոլորտի կարողությունների գույքագրման աշխատանքները: Արդեն գործում է http://www.engineering-armenia.am կայքը, որտեղ հասանելի է ինժեներական և բարձր տեխնոլոգիական ոլորտի կազմակերպությունների գույքագրման արդյունքները ներառող տվյալների բազան:

- **Հայաստանում հետազոտություններ ու մշակումներ իրականացնող լաբորատորիաների/կենտրոնների ձևավորման և համատեղ ծրագրերի իրականացման նպատակով վերազգային կազմակերպությունների ներգրավման աշխատանքների իրականացում**

2018թ. հոկտեմբերի 5-ին Նախարարությունում «Մայքրոսոֆթ» ընկերության ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության հնարավորությունները, այդ թվում՝ 2011թ. Հայաստանում հիմնված Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի հենքի վրա Հայաստանում «Մայքրոսոֆթ»-ի հետազոտությունների և մշակումների կենտրոնի ստեղծման ուղղությամբ:

Նոյեմբերի 14-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի մոտ Նախարարության, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի և «Մայքրոսոֆթ» ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած հանդիպման ընթացքում «Մայքրոսոֆթ»-ի կողմից ներկայացվել է տեղեկատվություն «Microsoft Azure Bot» հարթակի վերաբերյալ, որի միջոցով ստեղծվող արհեստական բանականությամբ խելացի բոտերը հնարավոր է կիրառել ՀՀ պետական մարմիններին ուղղված քաղաքացիների գրություններին նորարարական լուծումների միջոցով առավել դյուրին, արագ և ավտոմատացված պատասխանելու համար:

- **Հայաստանում ազգային բիզնես ինկուբատորի ստեղծման ուղղությամբ աշխատանքների իրականացում**

Հաշվի առնելով տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանն ուղղված նորարար գաղափարներ ունեցող սկսնակ թիմերին և ընկերություններին մեկ պատուհանի սկզբունքով մեկ միասնական կառույցում նախաինկուբացիոն, ինկուբացիոն և հետինկուբացիոն աջակցության տրամադրման կարևորությունը՝ մշակվել է ազգային բիզնես ինկուբատորի ստեղծման ծրագրի կոնցեպտը, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:

6. ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

- **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը** սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

- **«Արտոնագրերի մասին» և «Արդյունաբերական դիզայնի մասին» ՀՀ օրենքների նախագծերը** ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ: ՀՀ վարչապետի հանձնարարության համաձայն նախագծերը կներկայացվեն նոր Կառավարության քննարկմանը:

- **«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** ՀՀ օրենքի նախագիծը ամբողջական փաթեթով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

7. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

- **Ֆրանկֆոնիայի 2018 թվականի գագաթնաժողովի շրջանակում Ֆրանկֆոն ավանի ծրագրի մշակմանը և իրականացմանը մասնակցություն, ինչպես նաև՝ գագաթնաժողովի՝ Հայաստան ժամանած մասնակիցների համար Հայաստանում տուրերի պատշաճ կազմակերպման ապահովում**

Ֆրանկֆոնիայի գագաթնաժողովի ընթացքում Հայաստան ժամանած շուրջ 500 հյուրերի համար կազմակերպվել են տուրեր Հայաստանի մի շարք զբոսաշրջային գրավչության վայրեր:

Համակարգվել է Գագաթնաժողովի շրջանակներում բացված Ֆրանկֆոն ավանում Հայաստանի ներկայացումը: Գագաթնաժողովի հյուրերին տրամադրելու նպատակով թարգմանվել և 3000 օրինակ տպագրվել են Հայաստանի մասին գովազդային փաթեթներ (բրոշյուրներ, քարտեզներ, թռուցիկներ), որոնք բաժանվել են գագաթնաժողովի մասնակիցներին Ֆրանկֆոն ավանում և Մարզահամերգային համալիրում:

- **Միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ բանակցություններ՝ սատելիտային հաշիվ համակարգի ներդրման, ներառյալ՝ զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության իրականացման նպատակով ֆինանսական միջոցներ ներգրավելու ուղղությամբ**

Վիճակագրության վարման մեթոդների բարելավման ուղղությամբ Զբոսաշրջության սատելիտային հաշիվ համակարգի (Tourism Satellite Account) ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ՀՀ սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ 3-րդ հետազոտությունը, որի ուղղությամբ Համաշխարհային Բանկի հետ բանակցային գործընթաց է իրականացվում:

- **Զբոսաշրջության զարգացման տարեկան ծրագրերի իրագործում**

- «ITB BERLIN 2018» ցուցահանդեսի շրջանակում իրականացվել է «Բացահայտիր Հայաստանը» խորագրով շնորհանդես:
- Հայաստանը մասնակցել է Ցինդաո քաղաքում տեղի ունեցած Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների ներմուծվող ապրանքների ցուցահանդեսին:

- Սմիթսոնիան հաստատության կողմից կազմակերպված «Ֆոլքլայֆ» ամենամյա փառատոնի շրջանակներում ԱՄՆ 3 քաղաքներում կայացել են հանդիպումներ զբոսաշրջության ոլորտի շուրջ 70 կազմակերպությունների և շուրջ 40 մասնագիտացված լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ: Նկարահանվել է Smithsonian Folklife փառատոնի վերաբերյալ կարճ տեսահոլովակ: Մասնացության արդյունքում ԱՄՆ-ում հիմնվել է Հայաստանի զբոսաշրջային գրասենյակը:
- Հայկական պատվիրակությունը մասնակցել է Դուբայում կազմակերպված Հայաստանի զբոսաշրջային արդյունքը ներկայացնող և Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ ու բարենպաստ ուղղության ճանաչելիության բարձրացմանն ուղղված՝ «Հայաստան. ժամանակն է բացահայտելու» խորագրով շնորհանդեսին:
- Հայաստան են հրավիրվել ավելի քան 50 ԶԼՄ ներկայացուցիչներ և բլոգերներ: Այցերի արդյունքում նկարահանվել է 15 տեսանյութ, հրապարակվել են շուրջ 100 հոդվածներ, արձանագրվել է ավելի քան 3 մլն դիտում:
- «Օրեր» եվրոպական անկախ ամսագրում տպագրվել է առաջին հոդվածը Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների վերաբերյալ:
- Հանդիպում է տեղի ունեցել Լիբանանի «Վանա ձայն» ռադիոկայանի տնօրենի հետ: «Վանա ձայնի» եթերում Մերձավոր Արևելքի երկրների ունկնդիրների համար շարունակել է «Երազի երկիր» խորագրով հաղորդաշարը (11 հաղորդում):
- Ապահովվել է Հայաստանի 36 և Արցախի 3 զբոսաշրջային ընկերությունների մասնակցությունը միջազգային 6 զբոսաշրջային ցուցահանդեսներին.
- Կազմակերպվել և անց են կացվել 5 մարզային ավանդական փառատոններ («Թութ» խորագրով «Սյունյաց ավանդույթներ», Դիլիջան համայնքում պատմամշակութային վերածննդին նպաստող, Արենի համայնքում Գինու փառատոն, Ախթալա համայնքում Խորոված խորագրով Ավանդական ուտեստների մրցույթ-փառատոն, Հնաբերդ համայնքում Տոլմա խորագրով Ավանդական ուտեստների մրցույթ-փառատոն):
- Ապահովվել է մասնակցությունը Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև)՝ ԺՆև Կանտոնի Առևտրաարդյունաբերական պալատում (CCIG) անցկացվող «Հայաստան. բացահայտեք հնարավորությունները» խորագրով գործարար համաժողովին,
- Հայկական պատվիրակությունը մասնակցել է Հունաստանի Սալոնիկ քաղաքում կազմակերպված «Մետաքսի ճանապարհի զբոսաշրջություն» թեմայով 8-րդ միջազգային համաժողովի աշխատանքներին:
- Մշակվել է «Ռուսական հետք Հայաստանում» զբոսաշրջային արդյունքը, որի շնորհանդեսը տեղի է ունեցել սեպտեմբերի 21-ին Ռուսական պետական թանգարանի Միխայլովյան դղյակում: Տպագրվել են բուկլետներ, պատրաստվել և ցուցադրվել է տեսահոլովակ, ինչպես նաև ներկայացվել է մշակութային ծրագիր:

❍ **Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի վիճակագրության բարելավման աշխատանքների ապահովում**

Մշակվել և 2018թ. ապրիլի 12-ին N14 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործմանն ուղղված միջոցառումների ծրագիրը»: ՀՀ վիճակագրական կոմիտեն ՀՀ շահագրգիռ կողմերի հետ մշակել է տեխնիկական առաջադրանքի նախագիծը, որը համաձայնեցվել է ՀՀ շահագրգիռ կողմերի հետ և վերջնական տարբերակը տրամադրվել է զբոսաշրջության կոմիտե, որին կհաջորդի գնառաջարկի և գնանշման հարցման իրականացման կազմակերպման գործընթացը:

- **Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, մասնավորապես՝ կրոնական, էթնո-, էկո- զբոսաշրջային արդյունքների մշակում, քարտեզագրում, համապատասխան զբոսաշրջային երթուղիների գծագրում, թվայնացում և հրապարակում**

Մշակվել է «Գինու զբոսաշրջություն» զբոսաշրջային արդյունքի երթուղին, որը անցնում է Վայոց Ձորի, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերով, ներառում է զբոսաշրջային ծառայություններ մատուցող գինու գործարանները և պատմամշակութային կոթողները: Ընթանում են Armenia.travel պաշտոնական զբոսաշրջային կայքում զետեղված էլեկտրոնային քարտեզի ստեղծման աշխատանքները, որը պարունակելու է «Ռուսական հետք», «Գինու զբոսաշրջություն», «Ուխտագնացություն առաջին քրիստոնյա երկիր», «Գաստրո զբոսաշրջություն» և մի շարք այլ երթուղիներ, ինչպես նաև ավելին քան 100 արկածային երթուղիներ ամբողջ Հայաստանում: https://www.armenia.travel կայքում տեղադրվել են զբոսաշրջային արդյունքի զբոսաշրջային 7 ուղղություններ:

8. ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

2018 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Մշակվել է ՀՀ կառավարության որոշման համապատասխան նախագիծ, որով նախատեսվում է պետական գույքի օտարման գնի և պայմանների համար սկզբունքների սահմանում:
- Հիսուն և ավելի տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատվել է նոր խմբագրությամբ:
- 2018թ. ընդունվել են 3 ընկերությունների բաժնետոմսերի և 1 գույքի մասնավորեցման մասին ՀՀ կառավարության որոշումներ, ինչպես նաև կնքվել են պայմանագրեր 2017թ. ընթացքում մասնավորեցման որոշումներ ընդունված 2 ընկերությունների մասով:
- Ուսումնասիրվել է օտարման ենթակա պետական սեփականություն հանդիսացող գույքն առանց գնային առաջարկի վաճառքի կազմակերպման գործընթացը և մշակվել մեթոդական և իրավական դաշտը: